ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

29.03.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան <<05>> դեկտեմբերի 2018թ.

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մակինյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ և <<Թունել>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս Ընկերության տնօրեններ Յու. Ջավադյանի և Ա. Սանահյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և 01.03.2016թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 29.03.2017թ. կնքված <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ>> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողի կողմից՝ 2017 թվականի մարտի 29-ին կնքված ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ Պայմանագրի՝ 2018 թվականին Արփա-Սևան N 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման (այսուհետ՝ Ծառայություն) համար վճարման ենթակա գումարը սահմանել 7 027 000 (յոթ միլիոն քսանյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Ծառայությունը մատուցվում է 2018 թվականի հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ:

1.3 Սահմանել Ծառայության վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.4 Պատվիրատուն 2018 թվականին իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2018թ.:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մաս:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Մ. ՄԱԿԻՆՅԱՆ
Կ. Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859

ՅՈՒ. ՔԱԼԱԴՅԱՆ
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<Թունել>> ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
"Էվոկաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333

Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ.

*Հավելված 1*
*<<29>> մարտի 2017թ. կնքված*
*N <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ>> գնման պայմանագրի*
*<<05>> փետրվարի 2018թ.*
*կնքված Համաձայնագիր 2-ի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների իրականացման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում | 2 270 000 | 2 270 000 | 2 270 000 | 2 270 000 | 2 270 000 | 2 270 000 | 4 687 000 | 4 687 000 | 4 687 000 | 7 027 000 | 7 027 000 | 7 027 000 | **7 027 000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Մ. ՄԱԿԻՆՅԱՆ
Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859

ՅՈՒ. ՋԻՐԱՔՅԱՆ
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Թունել>> ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն.20
"Էվոկաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ
Կ.Տ.